



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

26 հունիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի

Ա. Խաչատրյանի

Քննության առնելով Սամսոն Խարազյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Սամսոն Խարազյանը 2017թ. հունիսի 5-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «...վերջնական դատական ակտով իմ նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի, այն է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151, 169-171 հոդվածները ճանաչել ՀՀ Սահմանադրության 61 և 63 հոդվածներին հակասող և անվավեր»:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ.

1. Ըստ դիմողի՝ «Վճռաբեկ դատարանի միակ պատճառաբանական հերքման պատճառով օրենսդրական խոչընդոտը վերանում է որպեսզի օգտվեմ օրենքի իրավունքից»:

2. Դիմողի կողմից վիճարկվող դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ **հիմնավորումների բացակայությունը** հաշվի առնելով, կարելի է եզրակացնել, որ դիմողը չի ներկայացրել պատշաճ իրավական հիմնավորումներ վիճարկվող դրույթ-

ների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ: Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության **պարտադիր պայման**, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով պայմանավորված՝ խնդրո առարկա դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության որևէ հիմնավորում, **ինչը հիմք է հանդիսանում դիմումը որպես ակնհայտ անհիմն համարելու համար:**

Բացի դրանից, դիմողը հիմնավոր և պատշաճ ձևով չի փաստարկել, թե վիճարկվող դրույթի «հակասահմանադրականության» արդյունքում իր սահմանադրական որ իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման, **նույնպես անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:**

Ավելին, դիմողի կողմից վիճարկվող դրույթները չէին կարող խոչընդոտ հանդիսանալ պատկան մարմնին խնդրո առարկա ամիսների համար կենսաթոշակ նշանակելուն պարտավորեցնելու հարցում, **քանի որ, նախ՝ դրանք դատավարական նորմեր են, երկրորդ՝ այն հարցը, թե որ օրը պետք է համարվի որպես կենսաթոշակ նշանակելու համար դիմելու օր, կարգավորվում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով:** Վերոգրյալը նույնպես վկայում է այն մասին, որ դիմողի կողմից վիճարկվող դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու **պատճառաբանություններն ակնհայտ անհիմն են:**

3. Դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի նկատմամբ առաջացած անբարենպաստ հետևանքները դիմողի՝ օրենքի պահանջի չպահպանման արդյունքում իր նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են: Հետևաբար, խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթների հակասահմանադրականության վիճարկմամբ: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշմամբ սահմանված իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 6-րդ կետերով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Սամսոն Խարազյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝